«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

12 2015թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մասսայականացնել սուսերամարտի Հայաստանի Հանրապետությունում:

Ի հայտ բերել ուժեղագույն մարզիկներին, համալրել ՀՀ հավաքական թիմերը :

2. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ՀՀ սուսերամարտի երիտասարդների առաջնություն ք. Երևան -
(Խուլ-համրերի մարզապալատ- հասցե՝ Եղնիկ Կողբացու փ. 75 շ.)

27-29.01.2016թ.

Թիմերի ժամանում 26.01.2016

Մրցումների սկիզբը ժամը 11.00

27.01.2016 թ. խոցասուսեր երիտասարդներ և խոցասուսեր աղջիկներ

28.01.2016 թ. ճկասուսեր երիտասարդներ

29.01.2016 թ. թրասուսեր երիտասարդներ և ճկասուսեր աղջիկներ

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

ՀՀ երիտասարդների առաջնությանը մասնակցում են 1996 - 2002 թթ. ծնված Երևանի, Գյումրիի, Վանաձորի և Բյուրեղավանի մարզադպրոցների հավաքական թիմերի մարզիկ – մարզուհիները:

3. ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Մրցումների ընդհանուր ղեկավարումը իրականացվում է ՀՀ սուսերամարտի ֆեդերացիան, իսկ անմիջական ղեկավարումը իրականացնում է գլխավոր մրցավարական հանձնաժողովը համաձայն սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ սուսերամարտի ֆեդերացիան ՀՀ պետական աջակցությամբ հատկացված գումարներով հոգում է մասնակից թիմերի սնունդը, գիշերավարձը, ինչպես նաև մրցավարների սնունդը և գիշերավարձը: Թիմերի ճանապարհածախսը հոգում է գործուղող կազմակերպությունը, իսկ մրցման օրերին դրսից ժամանած մարզիկների տրանսպորտի ծախսը / հուրանոց-մրցավայր-հյուրանոց/ հոգում է սուսերամարտի ֆեդերացիան ՀՀ պետական աջակցությամբ հատկացված գումարների հաշվին:

5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մրցումների հաղթողները , մրցանակակիրները և հաղթողների մարզիչները պարգևատրվում են հավաստագրերով, մեդալներով և դրամական պարգևներով:

6. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Նախնական հայտերը ներկայացվում են ՀՀ սուսերամարտի ֆեդերացիա ՀՀ առաջնությունից 7 օր առաջ: Մասնակցության վերջնական հայտերը բժշկի կողմից հաստատված և անձնագիրը ներկայացվում են թիմերի ժամանման օրը մանդատային հանձնաժողովին ժամը 12.00-16.00:

Այն կազմակերպությունները, որոնք կներկայանան առանց հայտերի և առանց անձնագրի՝ չեն թույլատրվի մասնակցելու առաջնությանը:

Միջազգային կանոնակարգի համաձային յուրաքանչյուր մարզիկ իրավունք ունի մասնակցել 2 մրցաձևում:

N	Անուն, Ազգանուն	Ծննդյան տարեթիվ	Մրցաձև	քաղաք	Մարզական կազմակերպություն	Անձ.մարզիչ	Բժշկի թույլտ.